Հաշվետվություն
2022թ. հուլիսի 13-15-ը Ղազախստանի Հանրապետություն (Նուրսուլթան) գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը՝**
   Գնել Սանոսյան
   Տիգրան Մելքոնյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**
   ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության էներգետիկայի վարչության պետ

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Ղազախստանի Հանրապետություն, ք.Նուրսուլթան, 2022թ. հուլիսի 13-15-ը

4. **Հրավիրող կողմը.**
   ԱՊՀ Էլեկտրաէներգետիկական խորհրդի նախագահ

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**
   Մասնակցել ԱՊՀ Էլեկտրաէներգետիկական խորհրդի 60-րդ նիստին:

6. **Քննարկված թեմաները.**
   - Վերականգնվող էներգետիկայի բնագավառում ԱՊՀ երկրների համագործակցության արդիական հարցեր,
   - Ցածր ածխածնային էլեկտրաէներգետիկայի ներդրումը ԱՊՀ տարածաշրջանի կայուն զարգացման համար՝ հաշվի առնելով էներգետիկ անվտանգությունը,
   - ԱՊՀ երկրներում էլեկտրաէներգետիկայի ոլորտի թվային փոխակերպման հարցեր,
   - ԱՊՀ Էլեկտրաէներգետիկական խորհրդի գործադիր կոմիտեի 2019-2021թթ. հաշվետվություն,
   - ԱՊՀ Էլեկտրաէներգետիկական խորհրդի գործադիր կոմիտեի տարբեր աշխատանքային խմբերի և այլ մարմինների արդիականացում և արդյունավետության բարձրացում,
   - Օրակարգով նախատեսված տեխնիկական և կազմակերպական բնույթի այլ հարցեր:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը:**
   ԱՊՀ Էլեկտրաէներգետիկական խորհրդի 60-րդ նիստի ընթացքում բացի օրակարգային հարցերից, ներկայացվել և քննարկվել են էներգետիկայի առանձին ուղղություններով նորագույն տեխնոլոգիաների և մշակումների վերաբերյալ զեկույցներ:

ԱՊՀ էլեկտրաէներգետիկական խորհրդի 60-րդ նիստի շրջանակներում կայացել է հանդիպում Ղազախաստանի Հանրապետության էներգետիկայի նախարար Բ. Ակչուլակովի հետ:
Քննարկվել են «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ղազախստանի Հանրապետության կառավարության միջև Հայաստանի Հանրապետություն նավթամթերքների մատակարարման ոլորտում առևտրատնտեսական համագործակցության մասին» համաձայնագրի իրականացման հետ կապված հարցերը, ինչպես նաև վերականգնվող էներգետիկայի և էներգաարդյունավետության բնագավառում երկու երկրների հաջողված փորձի փոխանակման հնարավորությունները:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

ԱՊՀ էլեկտրաէներգետիկական խոհրդի 60-րդ նիստի օրակարգով նախատեսված բոլոր հարցերի վերաբերյալ ընդունվել են որոշումներ և ստորագրվել են մասնակից երկրների պատվիրակությունների ղեկավարների կողմից:
Նուրսուլթանում ստորագրվել և ռուսական կողմին է փոխանցվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի առք ու վաճառքի և հետագա գործունեության պայմանների մասին» 2013 թվականի դեկտեմբերի 2-ի համաձայնագրում փոփոխություններ կատարելու մասին Արձանագրությունը:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Շարունակել աշխատանքները ԱՊՀ էլեկտրաէներգիկական խորհրդի շրջանակներում:
Ղազախստանի Հանրապետության էներգետիկայի նախարարության հետ աշխատանքներ տանել նավթամթերքների կանխատեսումային հաշվեկշիռների մշակման և հաստատման ուղղությամբ՝ Հայաստանի Հանրապետություն նավթամթերքների մատակարարումներ իրականացնելու նպատակով:

10. Ստորագրությունը, ամսաթիվը:

19.07.2022թ.